



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԽԱԶՎԵՐԱՑԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ
ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ ՄՈՆԹԵՊԵՆԼՈՅԻ
Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Կիրակի, Սեպտեմբեր 13ը հաջվերացի տօնն է, որ միեւնոյն ժամանակ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի անուանակոչութեան տօնն է:

Այս գոյգ տօներուն առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ օրուան պատգամը պիտի փոխանցէ Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ: Առաջնորդ Սրբազանը նաեւ պիտի կատարէ մատաղօրհնէքի արարողութիւնը:

PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AT HOLY CROSS
CATHEDRAL ON THE FEAST OF THE EXALTATION OF THE
HOLY CROSS

On Sunday, September 13th, 2009, the Armenian Church will celebrate the Feast of the Exaltation of the Holy Cross. This feast is also the name day of Holy Cross Cathedral in Montebello.

On the occasion of this feast, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy at Holy Cross Cathedral and will deliver the sermon. There will also be the blessing of *madagh* on this occasion, which the Prelate will conduct.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ ԵՌՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄ

11-13 Սեպտեմբերի շաբաթավերջին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնը վայելող եռօրեայ դաստիարակչական-բանակում մը տեղի պիտի ունենայ Rivernook բանակավայրին մէջ, Ֆրեզնոյի մօտ:

Ծրագիրը կազմակերպուած է Թեմիս Երիտասարդական Միութեան վարչութեան կողմէ, գլխաւորութեամբ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեանի:

Բանակողները առիթ պիտի ունենան կրօնական ծրագիրներու հետեւելու, Ս. Գրային սերտողութիւններ կատարելու եւ արտադասարանային աշխատանքներու մասնակցելու:

Յաւելեալ տեղեկութիւններու համար կարելի է կապ պահել հեռաձայնելով Ազգ. Առաջնորդարան:

ACYA SUMMER CAMP

The central board of the Armenian Church Youth Association has organized a three-day spiritual retreat at Camp Rivernook in Kern County on the weekend of September 12, 2009.

The retreat is being held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and will be led by Very Rev. Fr. Barthev Gulumian.

During the weekend retreat, youth will participate in a religious program as well as social and outdoor activities.

Contact the Prelacy for registration information.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՉԳ. ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ՏԻԱՐ ՎԻԳԷՆ ԳԱՍԱՊԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Յինգշաբթի, 3 Սեպտեմբերի կէսօրին, Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեղրոնական Վարչութեան անդամներէն Տիար Վիգէն Գասապեանի, որ կարճատեւ այցելութեամբ Լոս Անճելըս կը գտնուի:



Առաջնորդ Սրբազանը յարգելի հիւրին ծանօթացուց Ազգ. Առաջնորդարանի աշխատանքի դաշտերն ու նորակառոյց շէնքին բաժանմունքները: Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու Ս. Աթոռոյս ու մեր Թեմին գործունեութեան զարգացման կարելիութիւններն ու հասարակաց մտահոգութիւնները:

Տիար Գասապեան բարձր գնահատեց Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ տարուող ժողովրդանուէր ու սերնդակերտ աշխատանքները ու մաղթեց, որ ազգանուէր գործունեութիւնը նոր թափ ու ծաւալ ստանայ:

PRELATE WELCOMES MEMBER OF THE CATHOLICOSATE CENTRAL COMMITTEE VICKEN KASSABIAN

On Thursday, September 3rd, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Mr. Vicken Kassabian, member of the Catholicosate Central Committee, who is in Los Angeles on a brief visit.

Given that it was Mr. Kassabian's first visit to the Prelacy, the Prelate familiarized him with the departments of the headquarters and the work that is carried out. Issues of mutual concern to the Holy See of the Cilicia and the Prelacy were also discussed.

Mr. Kassabian commended the vast endeavors of the Prelacy and wished success for the realization of future projects.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԱՎՈՏՈՒՆ ԵՂԱԲ ԱԶԳ. Ռ. ԵՒ Ա. ՓԻԼԻՊՈՍ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Հայկական մեր կրթական օճախները Հինգշաբթի, 3 Սեպտեմբերին վերաբացին իրենց դուռները, սկսելու համար ուսումնական 2009-2010 տարեշրջանը, հայ մանուկին ու պատանիին միտքն ու հոգին հարստացնելու համար գիտելիքով ու ազգային ժառանգություններով:



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Սուշեղ Արք. Մարտիրոսեան այցելեց Ազգ. Ռոգ եւ Ալեք Փիլիպոս վարժարանը, մասնակից եղաւ վերամուտի արարողութեան, իր օրհնութիւնները բաշխելով աշակերտութեան, դաստիարակներու ու վարժարանի մեծ ընտանիքին: Ան յատկապէս

ողջունեց վարժարանի սոր տնօրէնը՝ Տիար Նազօ Աբանեանը, ապա նաեւ վեր առաւ Հայ Դպրոցին տեղն ու դերը մեր սոր սերունդներուն կազմաւորման գործին մէջ: Վերամուտի արարողութեան ներկայ էին Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վիգէն Ա. Քիւյ. Վասիլեան, հոգաբարձութեան անդամներ, ինչպէս նաեւ Ազգ. Վարժարաններու կրթական համակարգի ներկայացուցիչներ ու մեծ թիւով ծնողներ:

Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, մեր եկեղեցիներու հոգեւոր հովիւները, իրենց կարգին, ներկայ եղան եկեղեցւոյ կից կանգնող մեր վարժարաններու վերամուտի հանդիսութեանց ու փոխանցեցին Առաջնորդ Սրբազանին վերամուտի պատգամը: Հայ Դպրոցի սերնդակերտ ու

հայակերտ հանգամանքին անդրադառնալու կողքին, Առաջնորդ Սրբազանը կանգ կ'առնէր այն իրողութեան առջեւ, որ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս այս տարին նուիրած է երիտասարդութեան ու այս մօտեցումով, Հայ Դպրոցը եւս կարելոր բաժին ունի մեր նոր սերունդներուն եւ երիտասարդութեան մէջ ազգային հարստութեանց տիրութեան գիտակցութեան զարգացման մէջ (պատգամը կը տրուի առանձնաբար):

Նշենք, որ Ազգ. Գռուզեան-Չաքարեան-Վասպուրական վարժարանը (Սան Ֆրանսիսքօ) շաբաթ մը առաջ բացած էր իր դուռները, իսկ Ազգ. Վահան եւ Անուշ Շամլեան վարժարանը, մօտակայ լեռնային շրջաններուն մէջ ծագած աղետալի հրդեհներուն հետեւանքով, քանի մը օրով յետաձգած է վերամուտի հանդիսութիւնը:

PRELATE CONVEYS HIS BLESSINGS TO PRELACY SCHOOLS' STUDENTS AT THE START OF THE NEW SCHOOL YEAR

Thursday, September 3rd, 2009, was the first day of the 2009-2010 academic year for Prelacy Schools.



H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, was at Rose and Alex Pilibos School in Hollywood to participate in the opening ceremony. The Prelate conveyed his blessings to the students and administrators and welcomed the new principal Mr. Nazo Apanian. Also in attendance was the pastor of St. Garabed Church Archpriest Fr. Vicken Vassilian, church and school board

members, and parents.

Parish Pastors also attended the opening ceremonies of their respective schools and read the Prelate's back to school message. In his message the Prelate lauded the mission of the Armenian School and its role in cultivating the minds of our youth with our heritage and national treasures.

Let us note that Krouzian-Zekarian-Vasbouragan School began the new school year a week ago, while Vahan and Anoush Chamlian School in Glendale has postponed the start of the new school year due to the surrounding wildfires.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԿԸ ՉՕՐԱԿՑԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՅՆԵՐԸՆ ՎՏԱՆԳՈՒԱԾՆԵՐՈՒՆ

Լոս Անճելըսի հիւսիս-արեւելեան լեռնային շրջաններուն մէջ աւելի քան շաբաթ մը առաջ ծագած անտառային հրդեհները ծաւալեցան դէպի

բնակարանային շրջաններ ու տազնապի մատնեցին Լա Քանիատայեն մինչեւ Սանլէստ տարածուող գօտիին բնակիչները, ի շարս որոնց՝ բազմահազար հայորդիներ: Յիշեալ շրջաններու բնակիչներէն մեծ թիւ մը հարկադրուեցաւ պահ մը հեռանալ իր բնակարանէն, վտանգէն ու հրդեհի ծուխէն խուսափելու համար:

Չորեքշաբթի պատճառեց զոհեր ու վիրաւորներ: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան հաղորդակցութիւններ ունեցաւ Լա Քրետենթա Յովիտի մեր եկեղեցւոյ հոգեւոր հովիւին ու ծխական պատասխանատուներու հետ, ծանօթանալու համար դէպքերու ընթացքին: Ազգ. Առաջնորդարան հասած տեղեկութեանց համաձայն, հայ ընտանիքներ բարեբախտաբար ծանր վնասներու չեն ենթարկուած:

Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, Կիրակի, 30 Օգոստոսին, Յովիվուտի Ս. Կարապետ, Կլենտէյլի Ս. Աստուածածին եւ Լա Քրետենթայի Յայց. Առաքելական եկեղեցիներուն մէջ յատուկ աղօթք մատուցուեցաւ, Ամենակալէն ինամբ ու անվտանգութիւն խնդրելու համար յիշեալ շրջաններու բնակիչներուն համար:

Չորեքշաբթի, 2 Սեպտեմբերէն ի վեր, հրդեհի գօտին հեռացուած է բնակարանային շատ մը շրջաններէ:

PRAYERS OFFERED FOR FAMILIES AFFECTED BY THE WILDFIRES

The wildfires which started in the Angeles National Forest over a week ago and which spanned the La Canada to Sunland areas threatened thousand of homes prompting the evacuation of residents in those areas, including many Armenian families, and resulted in casualties and injuries.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, was in communication with the pastor of the Crescenta Valley Church and was informed that Armenian families were spared from great damages.

By the ordinance of the Prelate, on Sunday, August 30th, 2009, special prayers were offered at St. Garabed Church in Hollywood, St. Mary's Church in Glendale, and the Crescenta Valley Church for all who were threatened by the fire.

Thankfully, by Wednesday, September 2nd, the fire had shifted direction and was not immediately threatening residences.
